ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
16 մարտի 2023 թվականի N 115 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՎՃԱՐՈՎԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ, ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի և 84-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի դրույթներով.

ո ր ո շ ու մ ե մ.

1.Հաստատել՝

1) «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 1 հավելվածի,

2) «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 2 հավելվածի,

3) «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 3 հավելվածի,

4) «Քաջարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 4 հավելվածի,

5) «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 5 հավելվածի,

6) «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի վճարովի սկզբունքով տրամադրվող հիվանդանոցային, արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու սակագները՝ համաձայն N 6 հավելվածի,

2. Սյունիքի մարզային ենթակայության փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ ապահովել ընկերությունների կողմից վճարովի սկզբունքով տրամադրվող ծառայությունների մատուցումը համաձայն հաստատված գնացուցակի:

16.03.2023

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. մարտի 16
ք. Կապան